

Խ. Գյուլնազարյան

ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ասքանազ Մռավյանը եղել է ոչ միայն Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար գործիչներից մեկը, այլև Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և Ալ. Մյասնիկյանի հետ միասին առաջին հայ մարքսիստ գրականագետներից մեկը։ Մեծ է Մռավյանի վաստակը հայ գրականության և կուլտուրայի զարգացման գործում։ Զբաղված լինելով ռևոլյուցիոն աշխատանքով, իսկ սովետական կարգերի հաստատումից հետո պետական-քաղաքական գործունեությամբ, Ասք. Մռավյանը ժամանակ և հնարավորություն է գտել զբաղվելու նաև գրականության, թատրոնի, կուլտուրայի հարցերով։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեն նախառևոլյուցիոն բոլշևիկյան մամուլում և սովետական պարբերականներում տպագրված նրա հոդվածները։

1915—1916 թվականներին, լինելով սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթի խմբագիրներից մեկը և միաժամանակ բոլշևիկյան պարտիայի Թիֆլիսի կազմակերպության ներկայացուցիչը՝ Զուբալովի անվան Ժողովրդական տանը, Ասք. Մռավյանը սիստեմատիկաբար հետևել է այդ ակումբի գործունեությանը և բազմաթիվ հոդվածներ ու գրախոսություններ է գրել թատրոնի ու դրամատուրգիայի խնդիրների մասին։ «Պայքարի» կցերում տպագրված այդ հոդվածներում Մռավյանը բարձրացնում է մի շարք գրականագիտական հարցեր, սեղմ, մի քանի տողի մեջ զարմանալի խորությամբ ու ճշմարտացիությամբ գնահատում այս կամ այն դրամատիկական երկը, բացահայտում կլասիկ դրամատուրգիայի կարևորությունը մասսաների դաստիարակության գործում, առաջ քաշում պրոլետարական դրամատուրգիայի ստեղծման և զարգացման հարցերը։

«Հայկական ռեպերտուարը Ժողովրդական տանը» հոդվածում Ասք. Մռավյանը հստակորեն ձևակերպում է թատրոնի և դրամատուրգիայի մասին ունեցած իր հայացքը։ «Ժողովրդի աչքում թատրոնը ուրախ ժամանցի վայր չէ,— գրում է նա,— այլ սրբազան մի հաստատություն, որտեղ նա լսում է (պիտի լսի) նոր, գեղեցիկ խոսքեր, որտեղ դեմոսի գաղափարական բարձրացման անգիտակ ձգտումները պատասխան և արձագանք պիտի գտնեն»։

Այսպիսով, գնելով թատրոնի զաղափարական առողջ բովանդակության և գեղեցիկ արվեստի հարցը, Ասք. Մռավյանը շեշտում է արվեստի և գրականության ներգործուն ուժը։ Ելնելով այս ճիշտ դիրքերից, նա անհաշտ կռիվ է մղում բուրժուա-նացիոնալիստական գրականության դեմ, մերկացնելով դրա քաղաքական արմատները, ցույց տալով դրա կործանարար ազդեցությունը դեռևս լրիվ քաղաքական գիտակցության չհասած աշխատավորական տարրերի վրա։ Այս տեսակետից ուռանձնակի արժեք է ներկայացնում Ասք. Մռավյանի հոդվածը զրված Լ. Շանթի «Կայսր» դրամայի բեմադրության առթիվ։

Այդ հոդվածում Մռավյանը փաստորեն շարադրում է մարքսիստական գրականության կողմից պատմա-գեղարվեստական երկերի, ներկայացվող պատմա-

հանջները: Դրանց մեջ առաջինը պատմական ճշմարտացիության պահանջն է: Մանրամասն անդրադառնալով Բյուզանդական կայսրության 10-րդ դարի պատմությանը, բնութագրելով այն տնտեսական-քաղաքական վիճակը, որով պայմանավորված էին գահակալական կռիվները այդ դարի Բյուզանդիոնում, Մուավյանն ապացուցում է, որ դրամայի հեղինակը աղավաղել է պատմական փաստերը՝ հասարակական-պետական տեղաշարժերը բացատրելով այս կամ այն պատմական անձնավորության ներքին հոգեկան էության, նրա ցանկությունների և կրքերի ելևէջներով:

«Մենք իրավունք ունենք պահանջելու, — գրում է Մուավյանը, — որ պատմական երևույթների մասին հեղինակն ասի իսկական ճշմարտությունը (իհարկե — գեղարվեստորեն), որ դասակարգային շահերի հակասության պատճառով կռվող պատմական անձնավորությունները դրամայի մեջ ներկայանան իրենց իսկական հույզերով, զգացումներով»:

Պատմական ճշմարտությանը հարազատ մնալու պահանջի հետ միասին Մուավյանը դնում է նաև պատմական թեմայով գրված գրական երկի գեղարվեստականության խնդիրը: Արդեն մեջ բերված հատվածի փակագծում գրված բառերից երևում է, որ Մուավյանը որոշակի տարբերություն է տեսնում պատմական ճշմարտության և դրա գեղարվեստական արտացոլման միջև, այլ խոսքով նա շեշտում է, որ գեղարվեստական գրականությունը պատմական իրականության սոսկ պատճենավորումը չէ: Այս սկզբունքից ելնելով նա պատմագեղարվեստական երկի հեղինակից պահանջում է պատմական ճշմարտության վրա խարսխված գեղարվեստական ճշմարտություն, ռեալիստական արվեստ, ուր հանգամանքներն ու կերպարները լինեն տիպական:

Հայ խոշոր բուրժուազիայի գաղափարախոսները ոչ միայն գեղարվեստական երկերում, այլև տեսական հոդվածներում և գրականագիտական մարզանքներում ձգտում էին անցկացնել պատմության մեջ դասակարգային պայքարի ժխտման բուրժուա-նացիոնալիստական տեսակետը: Այս առումով հայ բոլշևիկների համար կարևորագույն խնդիրներից մեկն էր մերկացնել ազգային միասնական հոսանքի գրականության բուրժուա-նացիոնալիստական թևը, որը մասնավորապես քսաներորդ դարի առաջին տասնամյակներում այնքան ինտենսիվորեն պրոպագանդում էին ռեակցիոն բուրժուական ինտելիգենցիայի ներկայացուցիչները:

Հայ ժողովրդի պատմության մեջ դասակարգային պայքարի ժխտման հենց այս տենդենցի դեմ է ելնում Մուավյանը Ա. Ահարոնյանի մի դասախոսության առիթով գրած հոդվածում:

«Ցեղերի տարերային ստեղծագործության» ինչ որ մութ նկույններից էր պ. Ահարոնյանը փորձում հանել հասարակական կյանքի զարգացման և առաջադիմության ֆակտորները», — գրում է Ասք. Մուավյանը: Եվ բնական է, որ ելնելով այսպիսի ռեակցիոն-իդեալիստական սկզբունքից, Ահարոնյանը հանդուժ է նույնառիպ հակապատմական արսուրդի, երբ փորձում է քննել հայ գրականությունն ու արվեստը սկզբնավորման օրից մինչ քսաներորդ դարի առաջին տասնամյակները: Ասք. Մուավյանը ծառանում է բուրժուական գրականագիտության այն տեսակետի դեմ, ըստ որի հայ ողջ կուլտուրան, արվեստը, գրականությունը ներծծված է միայն ազգային վշտի և կարոտի մոտիվներով, ընդ որում վերջին հանգամանքը ենթադրում է հայ ժողովրդի տարրեր խավելի միջև դասակարգային ներհակության բացակայություն և

ժողովրդի պատմական զարգացման յուրաքանչյուր էտապում բոլոր խավերի համագործակցություն՝ հայկական պետականություն ստեղծելու գործում: Այս հանգամանքը նկատի ունի մարքսիստ գրականագետը, երբ գրում է. «Պ. Ահարոնյանի դասախոսության 3-րդ մասը մեր նոր և նորագույն բանաստեղծության մասին էր, որի ամենաուժեղ շեշտը, ըստ Ահարոնյանի՝ հայրենիքի ազատագրության շեշտն է: Մենք կարծում ենք, որ այս համարձակ ենթադրությունը դժվար է ապացուցել հենց թեկուզ «Անուշի» հեղինակ Հովհ. Թումանյանի վերաբերմամբ: Իսկ Իսահակյան, Հակոբյան, Տերյան—սրանց վերաբերմամբ առավել ևս դժվար է կիրառել Ավ. Ահարոնյանի թեզը»:

Ապոլիտիզմը, անկումայնությունը, դեկադանսը, անհատի կուլտի անվան տակ սեռական սանձարձակության քարոզը բուրժուական իդեոլոգիայի արտահայտման ձևերն էին, որ առանձնակի ուժով պրոպագանդվում էին բուրժուական գրականագետների և գրողների կողմից Ռուսական առաջին ռևոլյուցիայի պարտությունից հետո, ցարական ռեակցիայի մոլեգնման տարիներին: Մասսաներին մոլորության մեջ գցելու, նրանց ռևոլյուցիոն գիտակցության արթնացումը կանխելու համար օգտագործվող այդ զենքը ցարիզմի և կոնտր-ռևոլյուցիոն բուրժուազիայի ձեռքին ծառայում էր նաև ռևոլյուցիայի նոր վերելքի տարիներին: Այստեղից միանգամայն հասկանալի է, թե ինչու էր մարքսիստական դրականագիտությունն այնքան կրքոտությամբ պաշտպարում անկումային դրականության և դրա գոյության իրավունքը պաշտպանող բուրժուական գրականագիտության դեմ: Ելնելով իսկական արվեստի ժողովրդայնության և դաստիարակչական խոշոր նշանակության սկզբունքից, մարքսիստական գրականագիտությունը մերժում էր այդ կեղծ արվեստը, որ վարագուրվում էր «արվեստը արվեստի համար» իբր թե ապադասակարգային, բայց ըստ էության ռեակցիոն բուրժուական լոզունգով:

Այդ անկումային ռեակցիոն արվեստի դեմ են ուղղված Ասք. Մոավյանի մի քանի հոդվածներն ու թատերական գրախոսությունները, որոնց մեջ հատկապես նշանակալից է նրա հոդվածը, գրված Շիմանսկու «Արյուն» դեկադենտական դրամայի բեմադրության առիթով:

Առողջ արվեստի պաշտպանության դիրքերից խարանելով այդ պիեսի բեմադրության փաստը և մատնանշելով դրամայի «կինեմատոգրաֆիական», «զարհուրելի» էությունը, Մոավյանը պահանջում է՝ աշխատավոր ժողովրդին ետ պահել այդ, այսպես կոչված, արվեստից: «Այդ տեսակի քրեական-կոշմարային գրվածքներից,— գրում է նա,— թմրած ու մեռնող դասակարգերի այլասերման, քայքայման հոտ է փչում. թող մեռելատերերը թաղեն իրենց մեռելների նեխված դիակները, բայց կայտառ ու կենսունակ ժողովրդին հեռու պահեք այդ տեսարանից, որովհետև նրա մեջ գեղեցկություն չկա, կյանքի առողջ շունչ չկա»:

Այսպես ուրեմն, կովելով դեկադենտական արվեստի դեմ, Ասք. Մոավյանն առաջ է քաշում իսկական արվեստի հարցը, այն արվեստի, որը կարող է ծառայել ժողովրդական լայն մասսաներին: «Լավ և խորը հասկացված դեմոկրատիզմը,— գրում է նա,— մեր ժամանակի ամենամեծ գեղեցկությունն է, ամենազեղեցիկ և ամենակենսունակ պոեզիան»: Այդպիսի արվեստը բոլշևիկ քննադատը տեսնում է կլասիկ դեմոկրատ գրողների երկերում և նորաստեղծ լյուրլետարական գրականության մեջ: Այս տեսակետից գրականագիտական խոշոր արժեք են ներկայացնում Մոավյանի թատերական գրախոսությունները

և հողվածները Սունդուկյանի, Շիրվանզադեի և այլ գրողների դրամատիկական երկերի մասին, ինչպես նաև նրա հողվածները, նվիրված Մ. Գորկու և Հ. Հակոբյանի ստեղծագործություններին:

Քննադատական ռեալիզմի դրամատուրգիայի մեջ Ասք. Մուսվյանը տեսնում է դասակարգային հասարակության արատների անողորմ երկացումը, որ օբյեկտիվորեն հանգեցնում է դասակարգային հասարակարգի ժխտմանը: Նման դեպքում ռեալիզմն այն շափանիշն է, որով բոլշևիկ գրականագետը շափում է երկի արժեքը: «Պատվի համար» դրամայի մասին Ասք. Մուսվյանը գրում է. «Դրաման շնորհիվ իր ռեալ բովանդակության գեղարվեստական և բեմական արժանիքների—հաջողություն ունի: Շիրվանզադեի տաղանդավոր գրիչը հալածադատ և բանձր գույներով է նկարագրում Բախվի հայ բուրժուազիայի առաջին սերնդի բարբերը»¹: Գրեթե նույն գնահատականին է արժանանում Դ. Սունդուկյանի «Քանդած օջախ» կոմեդիան: Սունդուկյանի երկը Ասք. Մուսվյանի կողմից բարձր է գնահատվում ոչ միայն այն պատճառով, որ նա ունի բեմական և գեղարվեստական խոշոր արժանիքներ, այլև որպես ռեալիստական ստեղծագործողություն, որը «հալածադատ գծերով տալիս է Թիֆլիսի հայ վաճառականության 60—70-ական թվականների սերնդի ընտանեկան և ընկերական բարբերի պատկերը»:

Իրականության ճշմարտացի արտացոլման էսթետիկական այս դրույթից ելնելով, Ասք. Մուսվյանը շեշտում է քննադատական ռեալիզմի կլասիկ երկերի քաղաքական հասարակական նշանակությունը: Գ. Սունդուկյանի «Պեպոն» բոլշևիկ քննադատի համար «անմահ երկ» է ոչ միայն շնորհիվ իր «անբռնադրոսիկ ռեալիզմի», այլև որովհետև «Պեպոն շաղախված է վարակիչ ակտիվությամբ և խիզախ է: Պեպոն անհաշտ բողոքող է ու ձգտում է վրեժխնդրության»: Ահա թե ինչու է Ասք. Մուսվյանը պահանջում, որ ժողովրդական թատրոնի համար այդ «արժանավոր և ուսուցանող պիեսը հաճախ բեմ հանվի»:

Ժամանակի անկումային դեկադենտական և բուրժուա-նացիոնալիստական գրականության աշխուժացումը բոլշևիկներն իրավացիորեն դիտում էին որպես իշխող դասակարգերի փորձը մասսաներին ետ պահել ռևոլյուցիոն շարժումներից: Այդ թունավոր գրականությանը ռևոլյուցիոն պրոլետարիատը հակադրում էր առողջ պրոլետարական գրականությունը, որի սկզբնավորողն ու ամենաականավոր ներկայացուցիչը ռևոլյուցիայի մրրկահավ Մ. Գորկին էր: Դորկին այն գրողն էր, որի ստեղծագործության մեջ Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատը տեսնում էր իր կյանքի, իր պայքարի ու իղձերի գեղարվեստական մարմնավորումը: Մ. Գորկու հանճարի առաջին գնահատողը պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինն էր, որ հոգատարությամբ և սիրով հետևում էր գրողին, հստակ քաղաքական ուղղություն տալիս նրա ստեղծագործությանը:

Ստ. Շահումյանը և նրա հետևորդամբ Հ. Հակոբյանը, Ասք. Մուսվյանն ու մյուս հայ բոլշևիկները հայերեն լեզվով թարգմանում և մասսայականացնում էին Մ. Գորկու երկերը: Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1901 թ. Ստ. Շահումյանը թարգմանել է Գորկու «Մի անգամ աշնանը» պատմվածքն ու հրատարակել առանձին գրքով: 1914 թ. «Նոր գրադարան» սերիայով լույս է տեսնում Մ. Գորկու հեքիաթներից երկուսը Հ. Հակոբյանի թարգմանությամբ: 1915—1916 թվականներին հայ բոլշևիկները ձեռնարկում են Գորկու «Իտա-

¹ Այս և հետագա բնագծումները մերն են: Խ. Մ.:

լական հեքիաթներ»-ի հայերեն հրատարակման գործին, նրանք թարգմանում և «Պայքար» թերթի էջերում մեկը մյուսի ետևից հրատարակում են Մ. Գորկու պատմվածքներից շատերն ու հեքիաթները գրեթե ամբողջությամբ, հեքիաթներից երկուսը թարգմանում է Ասք. Մուսվաթը:

Սակայն հայ բոլշևիկները չէին բավարարվում Գորկու երկերի այսօրինակ պրոպագանդայով: Մ. Գորկու ստեղծագործությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ են գետնից Անդրկովկասի բոլշևիկյան մամուլում, այդ թվում հայ բոլշևիկյան մամուլում, որոնց մեջ մարքսիստ գրականագետները պաշտպանում էին Մ. Գորկու արվեստը բուրժուական մամուլի հարձակումներից, բացահայտում էին Գորկու ստեղծագործության առանձնահատկությունները, բնութագրում Գորկուն, որպես մի հեղինակ, որ նոր ուղղություն էր բացել համաշխարհային գրականության մեջ՝ ջարդելով բուրժուական էսթետիկայի նորմերը գեղարվեստական ստեղծագործության իդեալական բովանդակության, թեմատիկայի, արվեստի բնագավառում:

Այդ տարիներին Մ. Գորկու ստեղծագործության նկատմամբ ունեցած դիրքը շատ բանով բնութագրում էր ամեն մի գրականագետի՝ ոչ միայն որպես այդպիսին, այլև որպես մտածողի և քաղաքական գործչի:

Ռուսական, այդ թվում անդրկովկասյան մամուլում Մ. Գորկու ստեղծագործության շուրջը ծավալված գրական-գաղափարական պայքարին ակտիվորեն մասնակցել է նաև Ասք. Մուսվաթը, որի հոդվածը Գորկու «Հեքիաթների» մասին տպագրվել է «Պայքարի» 1916 թվականի մարտի 6-ի համարում:

Հոդվածում ժխտելով գրականության և արվեստի ապագասակարգայնության բուրժուական թեզը, Մուսվաթը Մ. Գորկու հեքիաթների օրինակով ապացուցում է, որ իսկական արվեստը խոր սոցիալական պրոբլեմներ արտացոլող արվեստն է, և առաջին հիմքի վրա պրոլետարական արվեստը, որ արդեն իր տեղն է նվաճել համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ: Ասք. Մուսվաթը շեշտում է, որ կախարդական ուժին չկա Մ. Գորկու հեքիաթների մեջ, որ գրանցում արտացոլված է Խտալիայի աշխատավոր ժողովրդի կյանքն ու պայքարը, և ընդհանրացնում, որ դրանում էլ հենց կայանում է այդ երկերի գեղարվեստական ուժը, երկեր, որոնք «ողողված են մարդկային անկեղծ սիրով ու մարգարեական հավատով դեպի մարդկության պայծառ ապագան»:

Մ. Գորկու ստեղծագործությունը գնահատելիս ևս Ասք. Մուսվաթը ելնում է գեղարվեստական երկի ներգործուն ուժի գրականագիտական սկզբունքից: Պատահական չէ, որ նա հատուկ կերպով ընդգծում է Մ. Գորկու հերոսների հոգեկան բարեմասնությունները, հատկապես նրանց գիտակցական նվիրվածությունն իրենց ռևոլյուցիոն պայքարին, հավատն ապագայի նկատմամբ և աննկունությունը: «Գորկու աչքից շեն վրիպել կյանքի սովերային կողմերը, — գրում է Մուսվաթը, — հերոսները զգում են իրենց մեծ գործի դժվարությունը, բայց ուժեղ է նրանց կամքը, և առանց վարանելու շարունակում են իրենց ծանր պայքարը»:

Մ. Գորկու ստեղծած գրականությունը գենք էր բոլշևիկների ձեռքին՝ պայքարելու բուրժուական իդեոլոգիայի դեմ և միաժամանակ անգնահատելի միջոց պրոլետարական մասսաներին ռևոլյուցիոն ոգով դաստիարակելու գործում:

Հայ իրականության մեջ համանման դեր էր կատարում Հ. Հակոբյանի պրոլետարական պոեզիան: Դրանով պետք է բացատրել այն սերն ու համակրանքը, որով շրջապատել էին բոլշևիկները հայ պրոլետարական գրականու-

թյան հիմնադրին: Հայտնի է, թե որքան ջերմ վերաբերմունքի է արժանացել Հ. Հակոբյանի «Նոր առավոտ» պոեմը Ստ. Շահումյանի կողմից: Բարձր գնահատելով պրոլետարական պոետի առաջին ծավալուն երկը, այն ավելի կատարյալ տեսնելու ցանկությամբ, Ստ. Շահումյանը բազմաթիվ դիտողություններ է արել Հ. Հակոբյանի ուղարկած գրքույկի լուսանցքներում, դիտողություններ, որոնք շատ են օգնել բանաստեղծին հետագայում պոեմը վերամշակելիս: Տող առ տող քննելով «Նոր առավոտը», Ստ. Շահումյանը դիտողությունների մեջ շեշտում է ստեղծագործական բարձր գաղափարի և այն գեղարվեստական կատարյալ ձևի մեջ մարմնավորելու էսթետիկական հարցը: Նա պոեմի արժանիքը գտնում է ոչ միայն թեմայի, նոր պրոլետարական բովանդակության մեջ, այլև նոր ձևի մեջ, լեզվական այն ֆակտորայում, որ հայ գրականության մեջ էր ներմուծում Հ. Հակոբյանը:

Ս. Սպանդարյանը հատուկ հոգևած է գետնել 1911 թ. «Լիստոկ կոպեյկա» թերթի 21-րդ համարում, ուր բարձր է գնահատում պոեմը, շեշտելով, որ հակառակ բուրժուական ազդային գրողների, Հ. Հակոբյանը տուրք չի տալիս «թմբկա-հայրենասիրական» մոտիվներին և բոլորովին նոր, համամարդկային նշանակություն ունեցող մոտիվներ է բերում հայ գրականության մեջ:

Հ. Հակոբյանի նկատմամբ ցուցաբերվող ուշադրության արտահայտություններից մեկն էլ այն էր, որ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ասք. Մռավյանը իրենց խմբագրությամբ հրատարակվող թերթերի էջերը լայնորեն տրամադրում էին Հ. Հակոբյանին: Հ. Հակոբյանը միակ հայ բանաստեղծն էր, որի բանաստեղծությունները տպագրվում էին Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի խմբագրությամբ 1906 թ. հրատարակվող «Կայծ» և «Նոր խոսք» բոլշևիկյան թերթերում: «Պայքար» սոցիալ-դեմոկրատական թերթում, որի խմբագիրներից մեկը Ասք. Մռավյանն էր, մինչև 1917 թ. կեսերը գրական բաժինը ղեկավարում էր Հ. Հակոբյանը: Այդ թերթում են տպագրվել Հակոբյանի բազմաթիվ մարտական բանաստեղծությունները:

1914 թվականին Հ. Հակոբյանի և Մ. Արազու խմբագրությամբ հրատարակվում են հայ պրոլետարական գրականության առաջին ամսանախները՝ «Կարմիր մեխակները» և «Բանվորի ալբոմը»: Բոլշևիկյան «Պրավդա» թերթը հատուկ հոգևածով ողջունում է ամսանախների հրատարակությունը և բարձր գնահատում Հ. Հակոբյանի շուրջը համախմբված գրողների ստեղծագործությունը:

Ձայնակցելով «Պրավդային» Ասք. Մռավյանը հատուկ հոգևած է գետնելով «Պայքարում»: Մռավյանն այս հոգևածում Հ. Հակոբյանին և նրա հետ միասին հանդես եկող գրողներին դիտում է որպես Մ. Գորկու ստեղծած գրական ուղղության ներկայացուցիչներ, և կոնկրետ գնահատականներ տալիս ամսանախներին մասնակցած յուրաքանչյուր գրողի ստեղծագործությանը: Հոգևածը փոքր է, սեղմ, բայց այդ սեղմ տողերում իսկ երևում է, թե Ասք. Մռավյանն իսկապես խորությամբ է քննարկում գրականության հարցերը և որքան ճիշտ պատկերացում է տալիս պրոլետարական գրականության հեռանկարների մասին:

Ամսանախներում Հ. Հակոբյանը գետնել է ընդամենը երեք բանաստեղծություն, որոնց թվում «Քաղաքը»: Ասք. Մռավյանը շեշտը դնում է հենց վերջինիս վրա: «Այդ բանաստեղծությունը, — գրում է նա, — Հ. Հակոբյանի ստեղծագործության քվինտ-էսենցիան կարելի է համարել»: Ի՞նչն է, որ այդքան

գրավում է Մոավյանին: Ոչ միայն այն, որ բանաստեղծության մեջ թեման բարձրացված է՝ «շեշտակի լեզվով ու խիստ գույներով», այլև այն որ Հ. Հակոբյանի բանաստեղծությունը բուրժուական քաղաքի սոսկ ուրբանիստական նկարագրություն չէ, այլ առաջին հերթին ունի լույսի վերելքի ունի լույսի հաղթանակի նկատմամբ բանաստեղծի ունեցած պայծառ հավատի մարմնացումը: «Քաղաքի» մեջ ընթերցողն զգում է խոշոր կապիտալիստական քաղաքի ինքնատիպ գեղեցկությունը, բայց և միաժամանակ զգում է ունի լույսի պրոլետարիատի ուժը, այն ուժը, «որի ծով թափին չի դիմանալու ոչ մի ամբարտակ»: Ռեուլյուցիայի վերջնական հաղթանակի նկատմամբ ունեցած հավատն այն շափանիշն է, որով հայ բոլշևիկը շափում է հրկի գաղափարական արժեքը: Պատահական չէ, որ ամանախներում տպագրված Արազու երեք գործերից էլ («Կիսատ տունը», «Արևը», «Սպիտակ հերոսուհին») նա ավելի բարձր է գնահատում առաջինը: «Հաջող է մանավանդ «Կիսատ տունը», — գրում է Մոավյանը, — Արազի գույները քնքուշ են, բայց և որոշ: Նրա ամեն մի տողից բուրում է ավնիվ լավատես ձգտումներով լի տրամադրություն: Արազին պետք է մշակի և զարգացնի իր համակրելի տաղանդը: Նա ապագա ունի»:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Արազին այս գրախոսության մեջ է առաջին անգամ կարդացել իր գրական տաղանդի կանխագուշակումը:

Նույնպիսի բարձր գնահատականների են արժանացել առաջին հայ պրոլետարական դրամատուրգ Ան. Վարդանյանը, «Հ. Հակոբյանի ժանրի բանաստեղծ» Հ. Կամարին և մյուսները:

Վերոհիշյալ հարցերի շրջանակներով չի սահմանափակվում Ասր. Մոավյանի գրականագիտական գործունեությունը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ունի լույսից առաջ: Որպես ունի լույսի ժուռնալիստ և գրականագետ Մոավյանը անդրադարձել է տեսական էսթետիկական բազմաթիվ այլ հարցերի ևս, ինչպես նաև առանձին արևմտաեվրոպական գրողների ստեղծագործությունների գնահատմանը:

* * *

Ռուսաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ունի լույսից հաղթանակից հետո հավատարիմ բոլշևիկյան պարտիայի մղած պայքարին, Ասր. Մոավյանն իր ուժերն ամբողջովին նվիրում է Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի գործին: Որպես պարտիայի հավատարիմ զավակը Ասր. Մոավյանը ունի լույսի ակտիվ գործունեություն է ծավալում լենինյան գաղափարները հայ աշխատավորության մեջ տարածելու, անդրկովկասյան կոնտր-ունի լույսի դեմ պայքարելու ուղղությամբ: Ռեուլյուցիայի մոլեգնման պայմաններում նա ակտիվորեն մասնակցում է լեզալ և անլեզալ բոլշևիկյան հրատարակություններին, հանդես է գալիս բազմաթիվ մարտական հոդվածներով, որոնցում պաշտպանում է լենինիվմը կոնտր-ունի լույսի պարտիաների և նրանց մամուլի հարձակումից: Իր այս բոցաշունչ ժուռնալիստական գործունեությունը Ասր. Մոավյանը շարունակում է նաև մեր երկրում սովետական կարգերի հաղթանակից հետո: 1920 թվականից մինչև 1929 թվականը ներառյալ Հայաստանում չի հրատարակվել գրեթե ոչ մի պարբերական, որի խմբագրության մեջ եղած չլինի Ասր. Մոավյանը, բավական է հիշել միայն, որ նա մի քանի տարի

եղել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիրը, միաժամանակ աշխատելով պարտիական և սովետական կարևոր պոստերում:

Ամբողջովին նվիրվելով երկրի կուլտուրական առաջընթացի գործին, Ասք. Մռավյանը սովետական մամուլի էջերում այլևայլ հարցերի թվում առաջ է քաշում նաև սովետական գրականության, արվեստի, կուլտուրայի զարգացման խնդիրները, պաշտպանում է սովետական արվեստն ու գրականությունը արտասահմանյան սպիտակ զվարդիական, դաշնակցական մամուլի հարձակումներից: Այս տեսակետից հետաքրքիր է Ասք. Մռավյանի «Շռայլություն», թե անհրաժեշտություն» հոդվածը, ուր պաշտպանելով սովետական թատրոնի ստեղծման գաղափարը, նա միաժամանակ ընդգծում է այն հսկայական նշանակությունը, որ ունի թատերական արվեստը մասսաների քաղաքական և գեղարվեստական դաստիարակության գործում: «Բանվորա-գյուղացիական մեր ժողովրդի տրամադրություններն ու հույզերը ազնվացնելու, զարգացնելու կոչումն ունի խորհրդային թատրոնը», — հայտարարում է Ասք. Մռավյանը:

Ինչպես Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից առաջ, մեր երկրում սովետական կարգերի հաղթանակից հետո ևս Ասք. Մռավյանին հույզում են պրոլետարական գրականության զարգացման հարցերը, դրանով պետք է բացատրել, որ նա առիթը բաց չի թողնում մամուլի էջերում հանդես գալու Մ. Գորկու և Հ. Հակոբյանի ստեղծագործության գնահատմամբ:

Ո՞րն է համարում Հ. Հակոբյանի արժանիքը Ասք. Մռավյանը, երբ սովետական կարգերի հաստատումից հետո մի հետադարձ հայացք է ձգում պոետի ախառնությունն ստեղծագործության վրա, դիտելով այն ժամանակի ողջ հայ գրականության ֆոնի վրա: Առաջին հերթին մտքի այն խիզախությունն ու ճշմարտատեսությունը, որով օժտված Հ. Հակոբյանը դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին հրաժարվում է «մեղանկական վայելքներից» և գինվորազրվում «չորրորդ դասին»՝ աշխատավորությանը: Ասք. Մռավյանը Հ. Հակոբյանի այս քայլն իրավացիորեն համարում է նրա առաջին «առյուծի թռիչքը», որ փրկեց տաղանդավոր երիտասարդին քաղքենիական ճահճից և հայ պրոլետարիատին տվեց իր ցավերի և ուրախությունների երգիչը:

Մի քանի բառով բնութագրելով ուսական առաջին ռևոլյուցիայի օրերը, Ասք. Մռավյանը շեշտում է այն հսկայական մոբիլիզացնող ուժը, որ հատուկ է եղել պոետի մարտաշունչ երգերին:

Այնուհետև Ասք. Մռավյանը նկատում է, որ 1905 թ. ռևոլյուցիայի պարտությունից հետո Հ. Հակոբյանն է եղել այն պրոլը, որ երբեք չի տատանվել իր դիրքում, ոչ մի վայրկյան չի կասկածել ռևոլյուցիայի վերջնական հաղթանակի նկատմամբ և գրչով ու կյանքով ամբողջովին նվիրված է եղել մեծ պայքարին: Ահա այս առանձնահատկություններն են, ինչպես նկատում է Ասք. Մռավյանը, որ Հ. Հակոբյանին դարձրել են «կովկասյան բանվորության» հայ, վրացի, թուրք բանվորների ուսուցիչը, նրանց ուղեորված ուղեկցողը:

Մինչ իր փառապանծ կյանքի վերջը Ասք. Մռավյանը մնում է սովետահայ կուլտուրայի, գրականության, արվեստի զարգացման առաջամարտիկներից մեկը: